

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

«EASY TAXES-ի ՌԵՖԵՐԱԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ»

(Հավելված №3՝ 23.09.2024 թ. Պաշտոնական առաջարկին)

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ. 8 հուլիսի 2025 թ.

Կազմակերպիչ. «Իզի Թաքսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Պլատֆորմ. Easy Taxes Telegram-ընտան — https://t.me/etaxes_am_bot

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն Կանոնները կարգավորում են «Իզի Թաքսիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպվող «Easy Taxes-ի Ռեֆերալային ծրագիր» անվանումով ակցիային (այսուհետ՝ Ակցիա) մասնակցության պայմանները՝ Easy Taxes ծառայության առաջխաղացման նպատակով:

1.2 Ակցիային մասնակցությունն իրականացվում է կամավորության սկզբունքով, չի պահանջում առանձին պայմանագրի կնքում և չի առաջացնում աշխատողական, գործակալական կամ այլ քաղաքացիաիրավական պարտավորություններ Մասնակցի և Կազմակերպչի միջև:

1.3 Սույն Կանոնները հանդիսանում են «Հաշվապահական ծառայությունների մատուցման վերաբերյալ Պաշտոնական առաջարկի» (այսուհետ՝ Հիմնական առաջարկ) անբաժանելի մասը և կիրառվում են այն մասով, որով չեն հակասում վերջինիս դրույթներին:

2. Տերմիններ և սահմանումներ

Մասնակից — ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նույնականացվել է Easy Taxes ծրագրում, ստացել է անհատական ռեֆերալային հղում և տարածել է այն:

Հրավիրված օգտվող — անձ, որը Մասնակցի ռեֆերալային հղումով մուտք է գործել Easy Taxes և առաջին անգամ ձևակերպել և վճարել է բաժանորդագրություն:

Բալ (բոնուսային միավոր) — պայմանական միավոր, որը կուտակվում է Մասնակցին՝ որպես խրախուսում: Մեկ (1) բալ համարժեք է մեկ (1) ՀՀ դրամի և կարող է օգտագործվել բացառապես Easy Taxes համակարգում:

Easy Taxes ծրագրային ապահովում — Telegram-բոտ, հասանելի հետևյալ հասցեով՝ https://t.me/etaxes_am_bot, որը ծառայում է Ակցիային մասնակցելու նպատակով:

Ռեֆերալային հղում — Easy Taxes համակարգում գեներացված անհատական հղում, որի միջոցով Յրավիրված օգտվողը կապվում է կոնկրետ Մասնակցի հետ:

3. Մասնակցության և բալերի կուտակման պայմաններ

3.1 Մասնակից կարող է հանդիսանալ ցանկացած անձ, որը՝

- նույնականացվել է Easy Taxes ծրագրում,
- ստացել է անհատական ռեֆերալային հղում,
- տարածել է այն հնարավոր օգտվողների շրջանում:

3.2 Մասնակցին կուտակվում է 1000 (հազար) բալ յուրաքանչյուր Յրավիրված օգտվողի դիմաց, եթե միաժամանակ կատարվել են հետևյալ պայմանները՝

- ա) Յրավիրված օգտվողը անցել է Մասնակցի ռեֆերալային հղմամբ,
- բ) դրա արդյունքում ձևակերպել և վճարել է իր առաջին բաժանորդագրությունը,
- գ) մինչ այդ չի ունեցել վճարված բաժանորդագրություն Easy Taxes-ում:

3.3 Յուրաքանչյուր Յրավիրված օգտվող կարող է կապվել միայն մեկ Մասնակցի հետ՝ ըստ առաջին օգտագործված հղման:

3.4 Եթե հղումը փաստացի չի օգտագործվել, սակայն կողմերը (Մասնակիցն ու Յրավիրված օգտվողը) հաստատում են հրավիրման փաստը, Կազմակերպիչը իրավասու է իր հայեցողությամբ Յրավիրված օգտվողին կցել համապատասխան Մասնակցի հաշվին՝ առանց ռեֆերալային հղման:

3.5 Բալերը կուտակվում են բաժանորդագրության վճարման փաստի հաստատումից հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

4. Բալերի օգտագործման կարգը

4.1 Բալերը կուտակվում են Easy Taxes համակարգում Մասնակցի բոնուսային հաշվին և կարող են օգտագործվել ապագա ծառայությունների դիմաց վճարման նպատակով:

4.2 Բալերը՝

- կարող են օգտագործվել ամբողջությամբ կամ մասնակի,
- չեն փոխանակվում դրամական միջոցների,
- չեն փոխանցվում երրորդ անձանց,

- չունեն կիրառման ժամկետի սահմանափակում, եթե Կազմակերպիչը առանձին կարգով այլ բան չի սահմանել:

4.3 Բալերի կիրառումը կատարվում է Մասնակցի նախաձեռնությամբ՝ Easy Taxes-ի միջերեսի միջոցով՝ վճարման պահին:

5. Հրավիրված օգտվողի խրախուսում

5.1 Հրավիրված օգտվողը ստանում է 2000 (երկու հազար) ՀՀ դրամի չափով զեղչ, որը կիրառվում է առաջին ամսական բաժանորդագրության համար՝ ռեֆերալային հղմամբ անցնելուց հետո:

5.2 Չեղչը գործում է երեք անընդմեջ ամիսների ընթացքում՝ պայմանով, որ բաժանորդագրությունը մնում է ակտիվ և վճարումները կատարվում են ժամանակին:

5.3 Եթե բաժանորդագրության վճարումը ուշանում է, Կազմակերպիչը իրավունք ունի դադարեցնել զեղչի մնացած մասի տրամադրումը:

5.4 Չեղչը կիրառվում է ավտոմատ կերպով՝ առանց Հրավիրված օգտվողի կողմից լրացուցիչ գործողությունների:

6. Սահմանափակումներ և վերահսկողություն

6.1 Կազմակերպիչը կարող է չեղարկել բալերի տրամադրումը հետևյալ դեպքերում՝

- սույն Կանոնների խախտում,
- խարդախության կամ համակարգի չարաշահման փորձ,
- տեխնիկական սխալներ, որոնք հանգեցրել են սխալ կուտակման:

6.2 Նույն օգտվողը չի կարող երկրորդ անգամ գրանցվել որպես Հրավիրված օգտվող: Մասնակցությունն այլ անձնական հաշիվներով արգելվում է:

6.3 Բալերի տրամադրման և դուրսգրման վերաբերյալ Կազմակերպչի որոշումները համարվում են վերջնական:

7. Ակցիայի փոփոխման և դադարեցման կարգը

7.1 Կազմակերպիչը կարող է միակողմանիորեն փոփոխել սույն Կանոնները կամ դադարեցնել Ակցիան՝ հրապարակելով համապատասխան ծանուցում Easy Taxes ծրագրում և/կամ կայքում՝ <https://easytaxes.am>:

7.2 Մինչ Ակցիայի ավարտը կուտակված բալերն ու գեղջերը մնում են ուժի մեջ և կարող են օգտագործվել սույն Կանոնների համաձայն:

8. Կոնտակտային տվյալներ

«Իզի Թաքսի» ՍՊԸ

ՀՎՀՀ՝ 00525431

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստոմյան փողոց, 34 շենք

Էլ. փոստ՝ info@easytaxes.am

Telegram-ընտ՝ https://t.me/etaxes_am_bot